JUDICIAL SYSTEM AND LAWSUIT PRINCIPLES IN SMBAT SPARAPET'S "CODE OF LAW"

Lilit Sarvazyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article analyzes the jurisdictions of the judicial system, basic principles of judicial power and lawsuit presented in Smbat Sparapet's "Code of Law". According to Sparapet, the main function of the judicial power is to provide justice, prevent violations and punish criminals. Justice is administered through punitive bodies. In the "Code of Law" Smbat Sparapet interprets the jurisdiction and functions of two forms of the judicial power (state and church). The king exercises the highest judicial power through a multilevel judicial system; 1) the court of the king and the great ruler, 2) the court of the ruler, 3) the lower courts. The church courts are: a) the court of the catholicos, b) the court of the bishop, c) the court of the archimandrite, d) the court of the priest. The state courts were dealing with criminal and civil offenses, and the church courts enforced canonical or disciplinary judgments.

Keywords: justice, judicial system, principles of lawsuit, state court, church court.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Անուշ Մինասյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Բնագիտական հիմնախնդիրներին Հովհան Որոտնեցին (1315-1388) հիմնականում անդրադարձել է աստվածաշնչական հետևյալ երկու բնաբանների մեկնություններում (քարոզներում)՝ «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ.ՃԱ.26] և

«Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [Սաղ.Ժ.5][1]: Երկրորդ քարոզում, որը միջնադարյան հայ նշանավոր մտածողը կարդացել է Տաթևի վանական համալիրի նորակառույց շինության և զանգակատան օրհնության արարողության առիթով, որոշ տարբերություններով կրկնվում են առաջին քարոզի համապատասխան հատվածները: Հետագա դարերում Որոտնեցու աշակերտների կողմից կազմվել է առաջին քարոզի (մատենագիտության մեջ այն հայտնի է նաև «Յաղագս տարերց» կամ «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» անվանումներով) համառոտ տարբերակը[2], որը դասագիրք կամ ուսումնական ձեռնարկ է ծառայել միջնադարյան հայկական կրթական կենտրոններում՝ տարրաբանության և բնագիտության դասավանդման համար:

Տարրերի մասին ուսմունքը և բնագիտական պատկերացումները Որոտնեցու իմաստասիրական հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներն են: Նրա իմաստասիրական գոյաբանությունը համահունչ է ոչնչից աշխարհի աստվածային արարման քրիստոնեական պատկերացման հետ՝ որոշակի ռացիոնալիստական մեկնաբանությամբ: Այսպես, համաձայն Որոտնեցու գոյաբանության, «Ոչնչից ոչինչ չի առաջանում» իմաստասիրական սկզբունքը վերաբերում է կոնկրետ, մասնավոր դեպքերին, երբ, դիցուք, կրակն առաջանում է մեկ այլ մասնավոր պատճառից: Այնինչ, ըստ Որոտնեցու, ամենևին այլ է իրավիճակը, երբ ընդհանուրն է առաջանում ընդհանուր պատճառից: Ահա այդպես, Աստծուց՝ որպես ընդհանուր պատճառից, ստեղծվել է ընդհանրական («հասարակական») նյութը, որն անմարմին է և գոյություն ունի միայն որպես հնարավորություն («զօրութիւն»), չունենալով տեսակ՝ ընդհանրական նյութը տարածվում է բազմաթիվ տեսակների վրա:

---

[1] Տե՛ս Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դաւթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցէր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ.ՃԱ.26]; Եռամեծի և երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի յաւրհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [Սաղ.Ժ.5] // **Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 119-181; էջ 237-281:

[2] **Аревшатян С., Лалафарян С.**, Сочинение Иоанна Воротнеци “Об элементах” // «Բանբեր Մատենադարանի», թիվ 3, Եր., 1956, էջ 343-386:

«Հասարակական նիւթ»-ի հետ միաժամանակ ստեղծվել են նաև չորս գոյացական որակները՝ չորությունը, խոնավությունը, սառնությունն ու տաքությունը: Ընդհանրական նյութի և գոյացական որակների փոխազդեցություն («հպման») հետևանքով ի հայտ են եկել չորս տարրերը՝ կրակը, ջուրը, հողը և օդը. «Իսկ որ ի ջերմն հպեալ նիւթ՝ հուր եղև, իսկ որ ի ցուրտ՝ ջուր եղև, և որ ի չոր՝ երկիր, և ի գէջ՝ օդ: Սոյնպես չորս տարերք կազմեցան ի նիւթէ և ի տեսակէ»[3]: Իսկ արդեն տարրերի տարաբնույթ համակցությունների հետևանքով առաջացել են կոնկրետ, մասնավոր իրերը[4]:

Աշխարհի արարչագործության աստվածաշնչական հիմնադրույթի ռացիոնալիստական մեկնաբանության միջոցով Որոտնեցին փորձում է ոչ միայն չշրջանցել «Ոչնչից ոչինչ չի առաջանում» իմաստասիրական հայտնի սկզբունքը, այլև կիրառել Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքի՝ «Ամեն ինչ կազմված է նյութից և տեսակից» հիմնադրույթը՝ նյութը հասկանալով որպես «զօրութիւն», տեսակը՝ որպես չորս «գոյացական» որակներ: Այդպիսով, ոչնչից աստվածային աշխարհարարման քրիստոնեական հիմնադրույթը ստանում է այնպիսի տեսական հիմնավորում և ռացիոնալ մեկնաբանություն, որ այն «ընկալելի և ընդունելի» լինի ոչ միայն հավատի և կրոնական աշխարհընկալման, այլև բանական դիտարկման և փիլիսոփայական գոյաբանության տեսանկյունից:

Համաձայն տարրերի մասին Հովհան Որոտնեցու ուսմունքի՝ տարրն աշխարհի մասն է, որն ունի նվազագույն «շարախառնութիւն» կամ առավելագույն պարզություն: Որոտնեցու բացատրությամբ, ջուրը, կրակը, օդն ու հողը «տարր» են կոչվում մի քանի պատճառներով. նախ, քանի որ սփռված և ցրված են երկնքում և երկրի վրա, երկրորդ, քանի որ տարրերից յուրաքանչյուրը, որն էլ վերցնելու լինես, իր մեջ կրում է մյուս երեքը («զերեքն ի մինն խառնեալ գտանես»), երրորդ, քանի որ դրանք տանում-կրում են ցանկացած մարմնական գոյացություն, չորրորդ, ցանկացած մարմնական

---

[3] **Հովհան Որորտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 128:

[4] Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը որոշակիորեն կրել է 14-րդ դարում Հայաստանում կաթոլիկ քարոզչական լայն գործունեություն ծավալած գործիչներ Բարդուղիմեոս Բոլոնացու և Պետրոս Արագոնացու իմաստասիրական հայացքների ազդեցությունը: Այդ մասին մանրամասն տե՛ս **Аревшатян С. С.** , К истории философских школ средневековой Армении (XIV в.). Ер., 1980.

տեսակ՝ լինի դա անշունչ իր, բույս կամ զգայական էակ, կազմված է այս չորս տարրերից, և այս չորս տարրերի մասերի խառնումից՝ ըստ հատված տարրի չափի, առաջանում են բազմազան տեսակներ, հինգերորդ, միայն այս չորս որակներն են, որ տարրական են կոչվում, քանի որ ազդողական որակներ են, որոնք ինչին մոտենում են՝ ամբողջությամբ թափանցելով, «զբոլորն յինքեանս փոխարկեն», վեցերորդ, սրանցից յուրաքանչյուրն ունի որակության երկու բևեռ, որոնցից մեկով տարաբաժանվում են իրարից, իսկ մյուսով՝ մերձենում մեկմեկու: Այսպիսով, չորս տարրերը, լինելով «անհաշտ թշնամիներ», աստվածային հնարքով մնում են «անբաժանելի սիրելիներ», դրանով իսկ ապահովելով աշխարհի մնայուն ու հավերժական գոյությունը[5]:

Տարրերը կազմված են առանց ավելորդության և պակասության, այնպես, որ եթե մի չնչին մասն իսկ հատվելով գոյացնում է նոր էակ, հին էակը կազմալուծվում և լրացնում է հատված տարրի պակասը, իսկ հատված տարրից առաջացած նոր էակը լրացնում է վերացած էակի պակասը. «և այսպէս տեսակ և տարր տանին ի միմեանս»[6]:

Տարրերը նաև փոխարկելի են: Այսպես, հողը ճահճանալով դառնում է ջուր, ջուրը թանձրանալով և կավանալով դառնում է հող, իսկ եռալով և գոլորշիանալով՝ օդ, օդը խտանալով և հավաքվելով՝ վերածվում է ջրի, իսկ չորանալով՝ կրակի: Նմանապես, կրակը հանգելով և զրկվելով չորությունից դառնում է օդ:

Հետաքրքրական է նաև, թե ինչպես է Որոտնեցին պատկերացնում տարրերից մարմինների առաջացման գործընթացը:

Քանի որ շոշափելի, եռաչափ տարածական մարմինների կազմավորման համար անհրաժեշտ են չորս բան՝ էություն, թանձրություն, երևույթ և շարժում, այդ իսկ պատճառով մարմինների բաղկացության համար, ըստ որոտնեցիական ուսմունքի, անհրաժեշտ են չորս տարրերը. առանց կրակի չի կարող լինել երևութականություն, առանց օդի՝ շարժում, առանց ջրի՝ թանձրություն և առանց հողի՝ հաստատություն: Զարգացնելով չորս տարրերի՝ բուսական ու կենդանական, նաև անկենդան գոյացությունների փոխարկվելու մեխանիզմի վերաբերյալ թեման՝ Որոտնեցին հավաստում է, որ

---

[5] Տե՛ս **Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 129:

[6] Տե՛ս նույն տեղը:

տարբեր տարրերից տարբեր չափերով հատվելու և արարչի կարգադրությամբ կրակով եռացնելու միջոցով կազմավորվում են անկենդան բնության մարմինները՝ քարերի և բնական հանածոների բազմազան տեսակները: Ինչ վերաբերում է կենդանի բնությանը, ապա տարրերի մասերը, կենդանիների կերակրական մասում ճաշակվելիս կրում են որոշակի փոփոխություններ. հողի սառնությունն ու չորությունը փոխարկվում են սև մաղձի, իսկ ջուրը, սառն ու խոնավ լինելով, փոխարկվում է լորձի և թուքի, օդը, ջերմ և խոնավ լինելով, փոխարկվում է արյան, այնինչ կրակի ջերմությունն ու չորությունը վերածվում են խարտյաշ մաղձի: Նմանապես տարրերը փոխարկվում են գույների. կրակը դառնում է դեղին, օդը՝ կարմիր, ջուրը՝ սպիտակ, իսկ հողը՝ սև: Նույն եղանակով տարրերը վերածվում են համերի (օդը՝ քաղցր, կրակը՝ դառը, ջուրը՝ թթու, հողը՝ աղի) և ձայների (կրակը՝ սուր, երկիրը՝ ծանր, օդը՝ երկար, ջուրը՝ կարճ): Տարրերն իրենց բնությունը տարածում են նաև տարվա եղանակների (գարունն ունի օդի բնությունը, ամառը՝ կրակի, աշունը՝ հողի, իսկ ձմեռը՝ ջրի) և օրվա ժամերի վրա (առավոտից մինչև ժամը երեքն ունի օդի բնությունը, ժամը երեքից մինչև վեցը՝ կրակի, ժամը վեցից մինչև ինը՝ հողի, իսկ ինից մինչև ժամը տասներկուսն ու ողջ գիշերն ունեն ջրի բնությունը) և մարդու տարիքի (ծննդյան օրվանից մինչև քսան տարեկանը, այսինքն՝ տղայական հասակն ունի գարնան բնությունը՝ ջերմ և խոնավ, քսանից մինչև քառասուն տարեկանը՝ ամռան ջերմությունն ու չորությունը, քառասունից մինչև վաթսուն տարեկանը՝ աշնան ցրտությունն ու չորությունը և իսկ վաթսունից ութսուն տարեկանը՝ ձմռան խոնավութունն ու սառնությունը) վրա[7]:

Տարրերի մասին որոտնեցիական ուսմունքը մեր ժամանակների հեռավորությունից կարող է ինչ-որ չափով պարզունակ թվալ, սակայն փիլիսոփայապատմական ուսումնասիրության տեսանկյունից, կարծում ենք, կարևորվում են այդ ուսմունքի հետևյալ առանձնահատկությունները.

- Տարրերի փոխհարաբերությունները քննելիս միջնադարյան հայ մտածողը ցուցաբերում է ճկուն, դիալեկտիկական մոտեցում. ըստ նրա ուսմունքի տարրերից յուրաքանչյուրը ոչ բացահայտ ձևով իր մեջ կրում է մնացած երեքը, տարրերը որոշակի պայմաններում փոխա-

[7] Տե՛ս նույն տեղը:

կերպվում են մեկը մյուսին, լինելով միմյանց հակադիր («են սոքա այսպես թշնամիք անհաշտելիք»)՝ տարրերը նաև միասնական են («մնան սիրելիք անքակտելիք»):

- Տարրերի՝ բուսական, կենդանական և անկենդան գոյացությունների փոխակերպումները Որոտնեցին փորձում է բացատրել տարրերի միջև գործող միանգամայն բնականոն փոխազդեցություններով:
- Ընդունելով և հաշվի նստելով աստվածաշնչական հիմնադրույթների հետ՝ Որոտնեցին փորձում է դրանք մեկնաբանել նաև ռացիոնալ դիտարկման և իմաստասիրական գոյաբանության դիտանկյունից:

Արարված աշխարհի՝ երկրի և երկնքի կազմության, առանձնահատկությունների, բնական՝ աշխարհագրական, օդերևութաբանական, երկրաբանական, բուսաբանական և կենդանաբանական, աստղագիտական երևույթների վերաբերյալ Հովհան Որոտնեցին առաջադրում է բացատրություններ, որոնք, անշուշտ, որոշակի չափով կրում են քրիստոնեական աշխարհընկալման և իր ժամանակաշրջանի բնագիտական գիտելիքի առկա մակարդակի կնիքը: Խնդիր չդնելով ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու Հովհան Որոտնեցու բնագիտական պատկերացումները, որոնք բնական գիտությունների արդի տեսությունների լույսի ներքո կարող են ժամանակավրեպ թվալ, անդրադառնանք այդ բնագավառում Որոտնեցու որոշ ուշագրավ մոտեցումներին:

Որոտնեցին երկիրն աշխարհագրորեն բաժանում է երեք մասի՝ Եվրոպա, Ասիա և Լիբիա՝ նշելով յուրաքանչյուրի սահմանները: Տեղի տալով միջնադարյան քրիստոնեական աշխարհընկալմանը՝ նա օվկիանոսների և ծովերի առաջացումը բացատրում է աստվածային կամքով. «Իսկ ժողովն ջուրց եղև հրամանաւն Աստուծոյ ի խորշս և յանկիւնս և ի բոլորս երկրի, զոր պատրաստեալ էր յառաջագոյն, զոր և առանց հրամանի ոչ իշխէին գնալ ի տեղի իւրեանց մինչև առին հրաման՝ իսկոյն զետեղեցան ի տեղիս իւրեանց»[8]: Իր ժամանակաշրջանի աշխարհագրական պատկերացումների համաձայն նա ներկայացնում է երկրների և ծովերի դիրքերը՝ անհրաժեշտ

[8] Նույն տեղում, էջ 148:

համարելով ինչ-որ չափով անդրադարձ կատարել նաև երկրին վերաբերող ֆիզիկական երևույթներից «գլխաւորագունիցն»:

Այսպես, Որոտնեցին մեր գլխավերևում գտնվող օդը համարում է անտես և անօսր՝ եթե այն երևացնող չեն դարձնում սաստիկ հոսանքները: Ընդ որում, ցամաքի չոր վայրերից «վեր հոսեալ» օդը չոր և ծխատեսակ է՝ այն պատճառ է հանդիսանում զանազան հողմերի ու որոտների համար, իսկ խոնավ բնությունից «վերածխեալ»ը՝ խոնավ է. վերջինիցս առաջանում են մառախուղը, ձյունաբեր ամպերը և կարկուտը: Գետերից և այլ «ջրածուծ» վայրերից բարձրացած խոնավ գոլորշիները տեսանելի են դառնում խոնավության խտանալու պատճառով: Որոտնեցին սահմանում և բացատրում է մի շարք մթնոլորտային երևույթներ՝ **մառախուղը** (օդից թանձր և ամպից անոսր խոնավ գոլորշի է, որից ջուր չի առաջանում), **ցողը** (պարզ եղանակին առաջացած խոնավությունն է), **եղյամը (**կիսասառած ցողն է), **ամպը** (խտացած թանձր գոլորշի է, որ ջուր է առաջացնում), **անձրևը** (խոնավությամբ բավականաչափ թանձրացած ամպը թոթափում է խոնավությունը), **ձյունը** (առաջանում է, երբ խոնավ գոլորշիները բարձրանում են և հանդիպում երկու հակառակ հողմերի, լինելով ճերմակ և փրփուրի նման՝ այն խոնավագույն սառնության հետևանք է), **կարկուտը** (երբ նոսրությունը խտանում և փոխարկվում է «սերտութեան», ըստ թանձրության չափի պատռվելով պոկվում է հյուսիսային հողմի ազդեցությամբ և, վայր իջնելով, գնդվում ու վերածվում է կարկուտի հատիկների): Սրանք բոլորն էլ, ինչպես նշեցինք, առաջանում են խոնավ գոլորշիներից: Իսկ չոր օդից առաջ է գալիս **հողմը**, որը ոչ այլ ինչ է, քան ուժգին և համատարած հոսող օդի զանգված: Որոտնեցին սահմանում և նկարագրում է նաև հողմի տեսակներից յուրաքանչյուրը՝ զեփյուռը, մրրիկը և այլն: Ընդ որում, նա իրավացիորեն ընդունում է, որ լույսի արագությունը գերազանցում է ձայնի արագությանը, այդ իսկ պատճառով «յառաջ զփայլումն տեսանեմք և ապա լսեմք զձայն որոտման, բայց նա՛խ է պատառումն ամպոց, քան զհեղումն հրոյ»[9]:

Հովհան Որոտնեցին բնության երևույթները բացատրում է ֆիզիկական պատճառներով և բնական օրինաչափություններով՝

[9] Նույն տեղում, էջ 151:

համեմ-տորեն հայտարարելով՝ «իսկ մեզ քան զայս, որ ասացաք, առաւելն ամպով անգիտութեան ծածկեցաւ»[10]:

Հովհան Որոտնեցին արարված աշխարհի բնական երևույթների վերաբերյալ առաջադրում է մի շարք հարցադրումներ՝ «ի սկզբանէ էին լերինք և բլուրք, թէ՞ յետոյ եղեն», «բոյսք և տունկք յի՞նչ սակս ստեղծան», «ծովք ի սկզբանէ՞ էին աղտաղտուկ և դառն, որպէս այժմ», «զերկիրս յե՞ր վերայ հաստատեաց Աստուած» և այլն, որոնք իրենց արտաքուստ դավանաբանական ձևակերպումներով հանդերձ, դարձյալ նրա կողմից հիմնականում ստանում են աշխարհիկ բնագիտական բնույթի մեկնաբանություններ:

Հետաքրքրական մոտեցում է ցուցաբերում Որոտնեցին լեռների և բլուրների՝ ի սկզբանէ գոյություն ունենալու թե՞ հետագայում առաջացած լինելու հիմնախնդիրին: Նրա բացատրության առաջին հատվածը հիմնվում է Արիստոտելի բնագիտական հայացքների վրա, որից պարզ է դառնում, որ երկրի (երկրագնդի) ստեղծման ամենասկզբում երկրի մակերևույթին չեն եղել անհարթություններ՝ լեռների և բլուրների տեսքով: Այսպես, ըստ Արիստոտելի, ցանկացած տարր ունի կլոր ձև, ինչպես երկինքն է գնդաձև, այնպես էլ երկիրը, որ պարունակվում է ջրի, ջուրը՝ օդի, օդը՝ կրակի և կրակը՝ եթերի մեջ, այսինքն՝ երկիրն ունի գնդի ձև: Ելնելով այս փաստարկից, Որոտնեցին կատարում է հետևյալ եզրահանգումը. «Ապա ուրեմն, երկիրս ոչ ունէր լերինս և բլուրս յստեղծմանէն իւրոյ, զի լերինք և բլուրք ոչ յարմարին բոլորակ ձևոյն»[11]: Շարունակելով արիստոտելյան միտքը՝ Որոտնեցին գտնում է, որ գնդի ձև ունենալը պայմանավորված է նաև երկրի բնույթով. երկրի մասիկներն ունեն ծանրություն, նրանցից յուրաքանչյուրը «բնականապէս կամի իջանել մինչև ի միջին կետն երկրի», այդ մասիկները հավասարապես մոտենալով կենտրոնին՝ գոյացնում են գնդաձև մարմին՝ երկրագունդը, որն ի սկզբանէ չի ունեցել լեռներ ու բլուրներ: Վերջիններիս առաջացման

---

[10] Նույն տեղում, էջ 154:

[11] Նույն տեղում, էջ 151: Ի դեպ, այս քարոզի համառոտագրված տարբերակում «ապա ուրեմն» բառերից առաջ ավելացված է «և ասէ թէ (Արիստոտելը՝ Ա.Մ.)» (տե՛ս **Аревшатян С., Лалафарян С.,** Сочинение Иоанна Воротнеци “Об элемнентах”, էջ 372), իսկ Արիստոտելի փաստարկումը ներկայացված է խիստ համառոտ: Այնինչ Որոտնեցու քարոզի հիմնական՝ ընդարձակ տարբերակում այս եզրահանգումը ձևակերպված է նաև որպես իր՝ Որոտնեցու տեսակետ:

պատճառների հարցում ևս Որոտնեցին հիմնվում է Արիստոտելի տեսակետի վրա: Նախ, ըստ Արիստոտելի, առաջին պատճառը եղել է ուժգին երկրաշարժը, երբ հզոր հողմը մտնելով երկրի ներսը և ելք փնտրելով՝ այն «դողացուցանէ» և կեղևը պատռելով՝ դուրս է եկել և առաջացրել անհարթություններ՝ բարձրություններ և իջվածքներ: Երկրորդ պատճառը հորդացած ջուրն էր, որը ելք որոնելով, խախտել է հողի պնդությունը և տեղ-տեղ հավաքելով «զկակղագոյն մասն երկրի»՝ առաջացրել է լեռներ և բլուրներ, ինչպես ջրհեղեղի ժամանակ: Երրորդ պատճառը լեռների հողմն է. քանի որ ջրի և քամու ազդեցությամբ առաջանում են փոսեր և խոռոչներ, դրանք աստիճանաբար մաշվում են և դրանց համեմատությամբ երկիրն ավելի բարձր է երևում՝ «իբրև լեառն համեմատելով ընդ վիհն»: Այսպիսով, հետևելով Արիստոտելին, լեռների և բլուրների առաջացման պատճառ Որոտնեցին համարում է երկրագնդի վրա ընթացող բնականոն փոփոխություններն ու զարգացումները, այսինքն՝ հայ մտածողն ինչ-որ չափով ցուցաբերում է էվոլյուցիոնիստական մոտեցում: Շարունակելով իր վերլուծությունը՝ Որոտնեցին նշված երեք պատճառներին հավելում է չորրորդ՝ եկեղեցու վարդա-պետների կողմից առաջադրված «գեղեցիկ» պատճառը, ըստ որի մարդը կոչվում է «փոքր աշխարհ», և ինչպես այն ունի իր մարմնի վրա անհարթություններ՝ «զբարձրագոյն մասունս իւր և խորաձոր տեղիս», նմանապես մեծ աշխարհն ունի բարձրություններ և իջվածքներ, որոնք բարենպաստ պայմաններ են հանդիսանում մարդու, կենդանիների և բույսերի կյանքի ու գոյության համար: Ըստ Որոտնեցու, ի սկզբանէ լեռների և բլուրների գոյության տեսակետի համար հիմնավորում է հանդիսանում նաև Աստվածաշնչական այն վկայությունը, որ ջրհեղեղի ժամանակ ջուրն ամենաբարձր լեռներից տասնհինգ կանգուն ավելի է բարձրացել, ուրեմն՝ ջրհեղեղի ժամանակ արդեն կային լեռներ և բլուրներ: Ու թեև Որոտնեցին ձեռնպահ է մնում վերջնական եզրակացությունը ձևակերպելուց, սակայն ըստ նրա վերլուծական շարադրանքի, աշխարհի ստեղծումը ներկայանում է որպես մի գործընթաց, որի ինչ-որ ժամանակահատվածում (մինչև համաշխարհային ջրհեղեղը) բնական երևույթների (երկրաշարժ, ուժգին քամիներ, ջրերի հոսք) հետևանքով գոյացել են նաև լեռներն ու բլուրները:

«Ծովք ի սկզբանէ՞ էին աղտաղտուք և դառն, որպէս այժմ» հարցադրմանը պատասխանելիս Հովհան Որոտնեցին հմտորեն համադրում է «արտաքին» և «ներքին» մտածողների կարծիքները: Որոտնեցու առաջադրած լուծման համար հիմք է հանդիսանում արիստոտելյան այն պնդումը, որ ինքնին վերցրած իր բնույթով ջուրն անորակ՝ որևէ որակից զուրկ մարմին է, և ցանկացած որակական հատկության դրսևորում կարող է լինել միայն արտաքին ազդեցությունից. «զինչ ազգ որակ որ երևի ի ջուր՝ յարտաքուստ է և ոչ ի բնութենէ»[12]: Ինչ վերաբերում է ջրի աղիության և դառնության պատճառներին, համադրվում են հետևյալ պատճառաբանությունները՝ նախ՝ «ոմանց» կարծիքով, արեգակի ջերմությունից երկրից հոսում է աղտաղտուկ քրտինք կամ «շոր», որն անձրևը տանում լցնում է ծովը՝ այն աղիացնելով, երկրորդ՝ «այլք» (այլ իմաստասերներ) ասեն, թե ծովը դառնանում է այնտեղ բնակվող կենդանիների արտաթորանքից, երրորդ՝ համաձայն Արիստոտելի մոտեցման, արեգակի ազդեցության հետևանքով ծովի մակերևույթից ջրի նոսր զանգվածի գոլորշիացման հետևանքով մնում է թանձրը, որն էլ ծովը դարձնում է դառն ու աղի, չորրորդ՝ «վարդապետք եկեղեցւոյ ասեն», որ արարիչը երկիրը չորս տարրերից ստեղծելիս՝ դրանք նաև «համբար եդ ի սիրտ երկրի», այսինքն՝ տարրերն ամբարել է երկրի միջուկում (ի դեպ, այս դրույթը փաստարկելիս Որոտնեցին դարձյալ դիմում է արիստոտելյան հիմնադրույթներին), նույն ձևով՝ «է ի սիրտ երկրի համբար աղտոյ», այսինքն՝ կա երկրի կենտրոնում ամբարված աղտ, որը խառնվելով ծովերի ջրերին՝ դրանք դարձնում է «աղտաղտուկ» և հինգերորդ՝ եկեղեցու վարդապետների մի այլ մեկնաբանությամբ, ջրի աղբյուրները տարատեսակ են և լինում են նաև դառն ու աղի, որոնց հետ խառվելով՝ դառնանում ու աղիանում են նաև ծովերի ջրերը[13]:

Այսպիսի համադրական բնույթի մեկնաբանությունները տիպական է Հովհան Որոտնեցու աշխարհայացքի համար: Ընդ որում, յուրաքանչյուր կոնկրետ հիմնախնդիր հետազոտելիս միջնադարյան հայ մտածողը հարկ է համարում նախևառաջ բարեխղճորեն, համակարգված ձևով ներկայացնել «արտաքին» և «ներքին» մտածող-

[12] Նույն տեղում, էջ 157:

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 157-158:

ների տարաբնույթ տեսակետները: Ներկայացնելով այդ տեսակետները՝ Որոտնեցին կա՛մ քննության ներքին տրամաբանությունից է հասկանալի դարձնում իր կողմից ընդունելի լուծումը, կա՛մ բացահայտորեն ձևակերպում է այն՝ երկու դեպքում էլ պահպանելով իսկական գիտնականին հատուկ՝ օբյեկտիվության, ինքնուրույնության և հեղինակություններին գերի չլինելու սկզբունքները: Իր հետազոտական մեթոդի էությունը Որոտնեցին բացահայտում է երկնքի վերաբերյալ քննարկման ընթացքում, հետևյալ ձևակերպմամբ՝ «…Նախ զայս ինչ հետազոտեսցուք, թէ արտաքին իմաստասէրքն յաղագս սորա զմի ունէին դիտաւորութիւն, թէ այլ և այլ: Եվ ապա եկեսցուք յեկեղեցական կարծիս և զճշմարիտն արտադրեսցուք»[14]: Այսինքն, ճիշտ է համարում նախ ներկայացնել հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփա մտածողների տեսակետները, այնուհետև անդրադառնալ եկեղեցական վարդապետների ուսմունքներին և ապա միայն առաջադրել «ճշմարիտ» եզրահանգումը:

Բնագիտական բնույթի որոտնեցիական հաջորդ հարցադրումը ձևակերպվում է հետևյալ կերպ՝ Աստվածն ինչի՞ վրա է հաստատել երկիրը («զերկիրս յէր վերայ հաստատեաց Աստուած»)[15]: Նշված հարցին պատասխանելիս Որոտնեցին դարձյալ կիրառում է տարբեր տեսակետների համադրման՝ մեզ արդեն քաջածանոթ մեթոդը: Այսպես, որոշ փիլիսոփաների և վարդապետների կարծիքով, երկիրը հաստատված է ջրի վրա, իսկ փիլիսոփաներից Արիստոտելի պատկերացմամբ (ինչպես արդեն նշվել է)՝ երկիրը պարունակվում է ջրի, ջուրը՝ օդի, օդը՝ կրակի, կրակը՝ եթերի մեջ, որն իր արագընթաց պտույտի շնորհիվ իր մեջ հաստատուն է պահում երկիրը: Ինչ վերաբերում է երկրի՝ ջրի վրա հաստատված լինելու մասին եկեղեցու վարդապետների պնդմանը, շրջանառվում են երեք տիպի մեկնաբանություններ: Նախ, երկիրը (հողը) առանց ջրի չի կարող պնդանալ և հաստատուն դառնալ՝ «զի երկիր մածի, պնդի և հաստատի ջրոյն կապակցութեամբ»: Երկրորդ, ինչպես ջրով շրջապատված աշտարակը համարվում է ջրերի վրա հաստատված, այնպես էլ համատարած, անհատակ ջրով («Անդլնդական ծով») շրջապատված երկրի համար ասվում է, որ այն հաստատված է ջրերի

[14] Նույն տեղում, էջ 171:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 159

վրա: Եվ երրորդ, ասում են, որ երկրից ներքև կա ջուր, և երկիրը գտնվում է այդ ջրի մակերևույթին: Նաև ասում են, որ Աստված ստեղծել է հսկայական Վիշապ ձկանը, որը փական և արգելք է հանդիսանում անհատակ ջրի համար, քանի որ գլուխն ու պոչը մոտեցնելով՝ իրենով փակում է համատարած ջուրը: Նրանք, գրում է Որոտնեցին, բերում են Հոբի վկայությունը[16], որտեղ ասվում է, որ Վիշապն իր ակնաբիբի մեջ տեղավորում է ծովերի ողջ ջուրը, սակայն նրանք, ըստ Որոտնեցու, ասվածը հասկանում են բառացի («ըստ ճառին»), այնինչ աստվածաշնչական այս միտքը տվյալ պարագայում պետք է հասկանալ փոխաբերական իմաստով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ իր կողմից առաջադրված հիմնախնդրի մեկնաբանության այս հատվածում Որոտնեցին անիմաստ է համարում շարունակել վիշապ ձկան մասին առասպելական, վստահություն չներշնչող պատմությունների քննարկումը և շեղվելով քննարկման բուն նյութից՝ ձեռնամուխ է լինում եկեղեցական վարդապետությունների դասակարգմանը և դրա տրամաբանական հիմնավորմանը, որը, մեր կարծիքով, սկզբունքային մեթոդաբանական նշանակություն ունի նրա ողջ աշխարհայացքի համար: Որոտնեցու պատկերացմամբ, Աստվածաշնչական գրքերը վերաբերում են բազմաթիվ իրողությունների, միևնույն ժամանակ՝ աստվածաշնչական խոսքը բազմիմաստ է, հետևաբար, դրանց մեկնաբանությունները, եթե անգամ «մեկնողն մեծ վարդապետ» լինի, չեն կարող ներառել Սուրբ Գիրքն ամբողջությամբ («ոչ կարեն ի ներքոյ սահմանի արկանել զգիրս Աստուածաշունչս»): Եթե աստվածաշնչական մեկնաբանությունները միանշանակորեն ճշմարիտ լինեին, ապա Սուրբգրային դրույթները կարող էին խեղաթյուրվել հեթանոսների կողմից. «Եւ թէ այս հարկաւ լինի, այնժամ Գիրք Աստուածաշունչ աղարտեալ լինէր ի հեթանոսաց: Բայց Գիրք Աստուածաշունչ ընդարձակ ունի զիմաստ և ի բազումս տարածանի, և մեկնութիւն վարդապետի շիջանի, իսկ Գիրք և բանք Աստուածաշունչ անշիջանելի մնան»[17]: Դա նշանակում է, որ որքան էլ հեղինակավոր ու խորամիտ լինի Աստվածաշնչի մեկնիչը, նա չի կարող վերջնական ճշգրիտ ձևակերպումների հանգել Աստվածաշնչի իսկական

[16] Տե՛ս՝ Աստվածաշունչ [Յոբ. Խ. 20]:

[17] **Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 160:

բովանդակությունը բացահայտելու իմաստով: Ուրեմն, հնարավոր են աստվածաշնչական միևնույն դրույթի «տարընթերցումներ»՝ տարբեր մեկնաբանություններ, հնարավոր են տարակարծություններ և անգամ իրարամերժ տեսակետներ: Այդ դեպքում, ո՞րն է ճշմարտությունը սխալից տարբերակելու չափանիշը: Որոտնեցու առաջարկած լուծումը հետևյալն է. «Ապա ուրեմն, հարկ է մեզ ընտրողութիւն առնել և որ ըստ շաւղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ՝ ընդունե՛լ, իսկ որ արտաքոյ է ի շաւղաց Աստուածաշունչ գրոց՝ ո՛չ ընդունել, թէպէտ ասողն մեծ ոք իցէ: Զի ասէ Արիստոտէլ, թէ սիրելի է այր և սիրելի է ճշմարտութիւն. երկուցելոց սիրելեաց՝ մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն»[18]: Փաստորեն, նա կոչ է անում գերի չլինել Աստվածաշնչի մեկնիչների հեղինակությանն ու աստվածաշնչական մեկնությունների, և ընդհանրապես աստվածաբանական (և ցանկացած այլ) գրականության նկատմամբ, ցուցաբերել քննական, ընտրողական վերաբերմունք: Ընդ որում, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ (այն, որ աստվածաշնչական դրույթներն ունեն խորության տարբեր աստիճաններ և կարող են տեղիք տալ ինչպես բառացի, այնպես էլ՝ այլաբանական մեկնաբանության, որ դրանք բազմիմաստ են ու վերաբերում են տարաբնույթ իրողությունների և այլն) ճշմարտության տարբերակման նրա կողմից առաջարկվող չափանիշը կորցնում է իր բացարձակ միանշանակությունը, և ճշմարտությունը Աստվածաշնչի «մեկնիչ-հետազոտողի» կողմից բացահայտվում է ըստ նրա անկանխակալ, բազմակողմանի ուսումնասիրության արդյունքների:

Միևնույն ժամանակ, ելնելով նույն հանգամանքից (այն, որ աստվածաշնչական դրույթները ճշմարտությունն արտահայտում են տարբեր եղանակներով՝ բացահայտ կամ թաքնված ձևերով), Որոտնեցին կարծում է, որ կարիք չկա փորփրել և խորին խորհուրդ ու

---

[18] Նույն տեղում: Ի դեպ, մասնագիտական գրականության մեջ Որոտնեցու այս դրույթը մեկնաբանվում է նաև այլ իմաստով. «Նա (Որոտնեցին՝ Ա.Մ.) շեմքից մերժում և քննադատում է այն գաղափարները, որոնք համահունչ չեն եկեղեցու վարդապետությանը)» (տե՛ս՝ **Զաքարյան Ս.**, Հովհան Որոտնեցի, Եր., 2017, էջ 47): Մեր կարծիքով, նման մեկնաբանության դեպքում Որոտնեցու արտահայտած միտքը ընկալվում է ենթատեքստից կտրված, քանի որ այս դեպքում Որոտնեցին նկատի ունի Աստվածաշնչի մեկնությունները, և խոսքը վերաբերում է ա՛յդ մեկնությունների հավաստիության չափանիշին:

թաքնված իմաստ փնտրել այն դեպքերում, երբ ճշմարտությունը «մակերեսին է», այսինքն՝ ասված է բացահայտ ձևով, բառացիորեն, նաև՝ ինչ-որ իմաստով մակերեսային է: Այնինչ հակառակ դեպքում, այսինքն՝ երբ ճշմարտությունը խորն է, արտահայտված է այլաբանորեն, թաքնված ձևով, անհրաժեշտ է «պեղել» և ի հայտ բերել այն: Նրա պատկերավոր համեմատությամբ՝«Ե՛ն ջրհորք՝ որ յերես ունին զջուր, և ե՛ն՝ որ խոր: Իսկ որ երեսք են՝ ի խոր փորել յիմարութիւն է, և որ խոր ունի՝ յերես փորել և դադարել՝ անմտութիւն է: Այսպէս և Գիրք Աստուածաշունչ՝ ե՛ն, որ մօտաւոր ունին զգիտութիւն, և ե՛ն, որ ի խոր. զիւրաքանչիւր խնդիր ըստ իւրում պատշաճի պարտ է խնդրել՝ ըստ այնմ, թէ՝ «Կթեա՛ կաթն, և եղիցի կոգի, և թէ առաւել ճմլեսցես՝ եղիցի արիւն» [Առակ. Լ. 33]»[19]:

Այդպիսով, Սուրբ Գրքի մեկնիչը ստանում է հեղինակություններին գերի չլինելու, տարաբնույթ կարծիքները քննելու և ճշմարիտ լուծումը ընտրելու, աստվածաշնչական դրույթի խորության աստիճանը որոշելու և ըստ այդմ՝ այն բառացի կամ այլաբանորեն մեկնաբանելու իրավունք, և, նույնիսկ, կարելի է ասել, հրահանգ:

Աստվածաբանական գրականության նկատմամբ քննական և ընտրողական վերաբերմունքի համար «տեսական արդարացում» գտնելու նպատակով Հովհան Որոտնեցին դիմում է Արիստոտելի տրամաբանական ուսմունքին. «Արիստոտէլ ի Վերլուծականումն ի հինգ բաժանէ զամենայն հաւաքաբանութիւն՝ զապացուցական, ի տրամաբանական, ի ճարտասանական, ի մասնական և ի քերթողական... Ըստ այսմ սարասի ծանիր և զեկեղեցւոց վարդապետութիւնս բաժանել ի հինգ...»[20]: Այդպիսով Հովհան Որոտնեցին եկեղեցական «վարդապետությունները» ևս բաժանում է հինգ խմբի, ճիշտ այնպես, ինչպես Արիստոտելը տարբերակում է մտահանգման հինգ եղանակներ, որոնք ունեն ճշմարտության և կեղծության տարբեր հարաբերակցություններ: Ըստ Արիստոտելի, «ապացուցական հաւաքաբանութիւնը» լիովին ճշմարիտ է, այնինչ «քերթողականը»՝ լիովին կեղծ է, «ճարտասանական»-ում ճշմարիտը և կեղծը հավասարակշռում են միմյանց, «տրամաբանական»-ում գերակշռում է ճշմարիտը, ի տարբերություն «մասնական»ի, որում գերակշռում է

[19] Նույն տեղում, էջ 71:
[20] Նույն տեղում, էջ 160:

կեղծը: Ըստ այդմ, կարծում է Որոտնեցին, եկեղեցական ուսմունքները ևս լինում են «ամենևին ճշմարիտ» (ինչպես օրինակ, առաքյալների և մարգարեների աստվածաշնչական գրքերը), «ամենևին սուտ» (ինչպես օրինակ, առասպելական պատմությունները), «հաւասարապէս ճշմարիտ և սուտ» (ինչպես օրինակ, հմտացած վարդապետների բեմասացության խոսքը), «առաւել ճշմարիտ, քան սուտ» (այդպիսիք են, օրինակ, սուրբ հայրապետների՝ Աթանասի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի և այլոց գրվածքները), և, վերջապես, «առաւել սուտ, քան ճշմարիտ» (ինչպես օրինակ, թագավորների մասին հորինված գովաբանական պատմությունները):

Այսպիսի տրամաբանական հիմնավորմամբ Որոտնեցին լիովին արդարացված է համարում աստվածաբանական բնույթի գրականության նկատմամբ ևս տարբերակված մոտեցման կիրառումը, ինչը նշանակում է, որ կարելի է քննության ենթարկել այդ գրականության մեջ արտահայտված ցանկացած տեսակետ՝ նախապատվություն տալով (կամ չտալով) դրանցից որևէ մեկին: Իսկ դավանաբանական գրականության նկատմամբ քննական և ընտրողական մոտեցում ցուցաբերելու արդարացված և անհրաժեշտ լինելն անուղղակի իրավունք է ընձեռում Հովհան Որոտնեցուն հրաժարվել եկեղեցական որոշ վարդապետների այս կամ այն տեսակետից, իսկ որոշ հարցերում ընդունելի համարել կարևորագույն շատ հիմնահարցերի «արտաքին իմաստասերների» լուծումները:

Նշված մեթոդաբանական դիրքորոշմամբ Հովհան Որոտնեցին մեկնաբանում է «որպիսի՞ ձև ունի երկինքն» բնագիտական հիմնահարցը: Որոտնեցին հենց սկզբից ձևակերպում է առաջադրված հարցի «Եւ գիտելի է, զի ամենայն երկին ի հարկէ պարտի ունել զձև բոլորակ»՝ իմաստասիրական բնույթի պատասխանը, ապա առաջադրում է վեց փաստարկ, որոնցով հիմնավորում է իր տեսակետը:

Ըստ առաջին դրույթի, առավել պարզ մարմինը պետք է ունենա առավել պարզ ձև, իսկ երկինքն առավել պարզ մարմին է, քանի որ ոչ թե չորս տարրերից, այլ մի պարզագույն տարրից՝ եթերից («այսինքն՝ հինգերորդ էութիւն»-ից) է, իսկ ձևերի մեջ պարզագույնը շրջանի («բոլորակ») ձևն է, քանի որ, ի տարբերություն եռանկյունի, քառանկյունի և այլ ձևերի, այն բաղկացած է մեկ գծից: «Ապա ուրեմն, պարզ

էութեան երկնից պարտ է ունել զբոլորակ ձևն, որ է պարզ, քան զամենայն ձև»[21], -եզրակացնում է Որոտնեցին:

Համաձայն երկրորդ կետի՝ առավել պարունակող էությունն անհրաժեշտաբար ունի առավել պարունակող ձև, իսկ երկինքն իր մեջ պարունակում է մնացյալ ամեն ինչ, ուստի հարկավոր է, որ այն ունենա «զբոլորակ ձև, որ առաւել պարունակող է, քան զամենայն ձև»[22]:

Ըստ երրորդ փաստարկի, արագ շարժվող մարմինն անհրաժեշտաբար ունի այն ձևը, որն առավել հարմար է այդպիսի շարժման համար, «իսկ երկին սրագոյն ունի շարժումն, և բոլորակ ձևն առաւել պատրաստ է ի շարժումն», -կարծում է Որոտնեցին:

Չորրորդ կետի համաձայն «կատարելագոյն մարմնոյն պատշաճի կատարեալ ձև»: Երկինքը կատարյալ մարմին է, քանի որ ազդում է իր ներքևում գտնվող մարմինների վրա՝ պահպանելով («խնամելով») դրանք, իսկ կլոր կամ բոլորակ ձևը կատարյալ է, քանի որ չի կարող ավելանալ և պակասել, չունի (չի երևում) սկիզբ և ավարտ, որքան տարածություն ունի կենտրոնից մինչև շրջանագիծը՝ դրա վեցապատիկն (իսկ վեցը կատարյալ թիվ է) է շրջանագծի երկարությունը: «Ապա ուրեմն, - եզրակացնում է Որոտնեցին, -բոլորակ ձևն, զի կատարեալ է, պատշաճի կատարեալ մարմնոյ երկնից»[23]:

Հինգերորդ, ըստ Որոտնեցու, եթե երկինքն ունենար եռանկյունի կամ քառանկյունի ձև, շարժվելիս անկյունների տեղերը կդատարկվեին և «մնային անկիւնքն այն առանց տեղւոյ և տեղի անկեանցն՝ առանց մարմնոյ»[24]:

Վեցերորդ կետով հիմնավորվում է, որ քանի որ երկնային լուսատուները տարբեր կետերից երևում են նույն մեծությամբ, ուրեմն երկինքը շրջանաձև է, հակառակ դեպքում (եռանկյուն կամ ուղղանկյուն ձևերի դեպքում) տարբեր դիտակետերից դրանք մեծ կամ փոքր կերևային:

Որոտնեցու առաջադրած բոլոր փաստարկները հիմնվում են «բնական բանականության» դիտարկումների վրա և տրամաբանական, բնագիտական քննության արդյունք են: Որոտնեցին ներկայացնել

[21] Նույն տեղում, էջ176:
[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում, էջ177:
[24] Նույն տեղում, էջ177:

է նաև նշված տեսակետի դեմ ուղղված երեք՝ ըստ էության, աստվածաբանական բնույթի առարկությունները և դրանց հերքումները:

Ըստ առաջին առարկության, Աստվածաշնչում Դավիթ իմաստունը խոսելով երկնքի մասին, այն նկարագրում է որպես խորան («Զգեցեր զերկինս որպէս խորան»), իսկ խորանը, ինչպես հայտնի է, ոչ թե շրջանաձև է, այլ կիսակամար: Ինչին Որոտնեցին կտրուկ հակադարձում է, որ Դավիթը «պարզաբարոյ և խառնիճաղանչ մարդկան ըստ երևելոյ զգայութեանցս խոսի, որ միայն տեսանէին զկիսաբոլորն երկնից», այսինքն՝ սաղմոսում Դավիթն արտահայտվում է ռամիկ և պարզամիտ մարդկանց հատուկ՝ զգայություններով ստացված, երևացող իրականության՝ երկնքի տեսանելի կիսագնդի մասին: Այնինչ երկինքը գնդաձև է, կարծում է Որոտնեցին, եթե այն քննենք բնականությամբ. «այլ իմաստունք բանականությամբ քննեն, թէ երկինքն է բոլորակ»[25]:

Համաձայն երկրորդ առարկության, եթե երկինքը լիներ գնդաձև, ապա կստացվեր, որ ներքևի մասն անօգուտ և իզուր է կազմվել, քանի որ ոչնչով չի ծառայում («ոչ ինչ սպասաւորէ») մարդկանց: Դրան ի պատասխան՝ Որոտնեցին կարծում է, որ երկնքի ներքևի կիսագունդն անօգուտ չէ, քանի որ դրա շնորհիվ գիշեր է գալիս, և մարդիկ հանգստանում են, ինչպես վերևի կիսագնդի շնորհիվ ցերեկ է լինում, և մարդիկ գործում են:

Ըստ երրորդ առարկության, եթե երկինքն ունենար գնդի ձև, նրա որոշ մասերում սրբեր չէին լինի, իսկ եթե անգամ լինեին, ապա Քրիստոսը հեռու կլիներ այն սրբերից, որոնք գտնվում են ներքևի մասում: Չհամաձայնելով նաև այս առարկության հետ՝ Որոտնեցին կարծում է, որ նախ՝ անկախ գտնվելու վայրից, սրբերն իրենց սուր և պարզ տեսողությամբ հավասարապես տեսնում են Քրիստոսին, երկրորդ՝ եթե արեգակը տիեզերքի չորս կողմերից հավասարապես է երևում զգայող աչքերին, «քանի ևս առաւել հաւասար երևի իմանալի արեգակն իմանալի հայեցուածոյ», և երրորդ, թագավորի՝ գահին բազմած չլինելու դեպքում գահը թափուր չի համարվում, նմանապես, եթե ներքևի կիսագնդում սրբեր չլինեն՝ այն չի կոչվի դատարկ կամ թափուր:

[25] Տես նույն տեղում, էջ 177:

Այսպիսով, հակադրվելով բոլոր երեք «ներքին» տեսակետերին և հերքելով դրանք՝ Որոտնեցին հետևողականորեն պաշտպանում է երկնքի գնդաձևության՝ բանական, տրամաբանական քննությանը դիմացող, «արտաքին» իմաստասիրական տեսակետը:

Իր աշխատություններում Հովհան Որոտնեցին անդրադառնում է բնագիտական մի շարք այլ հիմնահարցերի ևս («երկինքն որպիսի՞ իմն յեղանակաւ շարժի», «բոյսք և տունկք յի՞նչ սակս ստեղծան», «զանազանութիւն բուսոց և անասնոց…» և այլն), իր մեկնաբանություններում, որպես կանոն, ձգտելով հնարավորինս լայնորեն կիրառել խնդիրների քննության «բնական բանականության» հետազոտական մեթոդը և հասնել եկեղեցական ու իմաստասիրական տեսակետների համաձայնեցմանն ու ներդաշնակեցմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տարրերի մասին ուսմունքը և բնագիտական պատկերացումները Հովհան Որոտնեցու (1315-1388) իմաստասիրական հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներն են: Տարրերի փոխհարաբերությունները քննելիս միջնադարյան հայ մտածողը ցուցաբերում է ճկուն, դիալեկտիկական մոտեցում. տարրերից յուրաքանչյուրը ոչ բացահայտ ձևով իր մեջ կրում է մնացած երեքը, տարրերը որոշակի պայմաններում փոխակերպվում են մեկը մյուսին, լինելով միմյանց հակադիր՝ տարրերը միաժամանակ նաև միասնական են: Հիմք ընդունելով աշխարհի աստվածային արարչագործության և նախախնամության, ֆիզիկական աշխարհի օրինաչափություններին վերաբերող աստվածաշնչական պատկերացումները՝ Որոտնեցին դրանք մեկնաբանում է ռացիոնալ դիտարկման և իմաստասիրական գոյաբանության դիտանկյունից:

Բանալի բառեր. միջնադարյան հայ փիլիսոփայություն, գոյաբանություն, տարրերի մասին ուսմունք, բնագիտություն, բանականություն, Հովհան Որոտնեցի, Արիստոտել, դավանաբանություն, աստվածաբանություն:

ЕСТЕСТВЕННО-НАУЧНЫЕ ПРОБЛЕМЫ В ФИЛОСОФСКОЙ КОНЦЕПЦИИ ИОАННА ВОРОТНЕЦИ

Ануш Минасян
Кандидат философских наук,
Старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Учение об элементах и естественно-научные представления являются важными компонентами философской концепции Иоанна Воротнеци (1315-1388). При рассмотрении взаимосвязей четырех стихий средневековый армянский мыслитель проявляет гибкий, диалектический подход: каждая из них имплицитно несет в себе три другие, в определенных условиях элементы преобразуются один в другой, будучи противоположными друг другу, они одновременно едины. Беря за основу библейские догматы божественного творения и провидения, а также представления, касающиеся закономерностей физического мира, Воротнеци интерпретирует их с точки зрения рационального наблюдения и философской онтологии.

Ключевые слова: средневековая армянская философия, онтология, учение об элементах, естествознание, разум, Иоанн Воротнеци, Аристотель, догматика, теология.

PROBLEMS OF NATURAL SCIENCE IN THE PHILOSOPHICAL CONCEPT OF HOVHAN VOROTNETSY

Anush Minasyan
Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The doctrine of the elements and natural science representations are important components of the philosophical concept of Hovhan Vorotnetsi (1315-1388). Considering the interconnections of the four elements, the medieval Armenian thinker takes a flexible, dialectical approach: each of them implicitly carries the other three, under certain conditions the elements are transformed one into another, being opposite to each other, they are simultaneously one whole. Taking as a basis the biblical dogmas of divine creation and providence, as well as the ideas regarding the principles of the

physical world, Vorotnetsy interprets them from the point of rational observation and philosophical ontology.

Keywords: мedieval Armenian philosophy, ontology, teaching of the elements, natural science, intelligence, Hovhan Vorotnesti, Aristotle, dogmatics, theology.

ԱԼՏԵՐՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Սվետլանա Արզումանյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Ինչպես հայտնի է, մի դարից մյուսին անցնելու ժամանակաշրջանում մարդկանց մեջ սովորաբար ուրվագծվում են նոր սպասումներ և հույսեր՝ կապված ակնկալվող դրական փոփոխությունների հետ, որոնք, ինչպես ենթադրվում է, պետք է ապահովեն նրանց կենսակերպի և մշակույթի ավելի բարձր մակարդակ: Ուստի, բնական է, որ 20-21-րդ դարերի սահմանագծին, երբ մարդկությունն արդեն հստակ գիտակցեց բնության և հասարակության տարբեր ոլորտներում տեղի ունեցած և արագ տեմպով շարունակվող փոփոխությունների ազդեցության խիստ բացասական արդյունքները[1], ակտիվացավ այն հատուկ զգացողությունը, որ մարդկությունը շարժվում է դեպի իր «ավարտը»: Այդ յուրահատուկ զգացողության համատեքստում շատ բնական ընկալվեցին պատմության, արվեստի և մշակույթի այլ դրսևորումների «ավարտը» հռչակող հայեցակարգերը: Եվ քանի որ անցյալ դարի 60-ական թթ. սկսած մշակույթը գտնվում էր հետմոդեռնիզմի իշխանության ներքո, ապա պարզ է, որ ճգնաժամային դրսևորումները կապվեցին առաջին հերթին հենց վերջինի հետ: Բազմաթիվ ուսմունքներում հռչակվեց հետմոդեռնիզմի ավարտի, նրա «մահվան» մասին, նրա սկզբունքներով ստեղծված մշակույթի արժեզրկման մասին: Այս իրավիճակում կրկին ակտիվացան փորձերը

[1]Խոսքը հատկապես կլիմայի փոփոխության, ֆինանսական և քաղաքական ճգնաժամերի, ռազմական հակամարտությունների ու ահաբեկչության ակտիվացման, աղքատների և հարուստների միջև ուժեղացող բևեռացման, թվային տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հեղափոխության, մարդու սեռական ինքնության հետ կապված նոր տեսությունների առաջացման մասին է: